

09 սեպտեմբերի 2021թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 028176/06

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 09.09.2021թ-ի թիվ 28176 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 28176 վարույթը և կից նյութերը, ՊԱՐՉԵՑԻ

«Ներքին Չարբախ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ 02251907) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Նիկիտայի Աբրահամյանը /հասցե՝ ք. Երևան, Ն. Չարբախ 1-ին փ. 36տ, անձն. տվյալներ՝ AM0235631, ՀԾՀ 7314870721/ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հիմնադրամի 2020 թվականի գործունեության հաշվետվությունը թերի է հրապարակել, մասնավորապես՝ հաշվետվությունը չէր կարող հաստատվել հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից 10.01.2020թ. որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ հաշվետվության 2-ից 4-րդ կետերում լրացված են հիմնադրամի միջոցներից օգտված անձանց վերաբերյալ տեղեկատվություն, ապա 12-րդ կետում պետք է լրացված լիներ նաև ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվությունը: Նկարագրված արարքի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.18 հոդվածի 1-ին մասով: Նշված իրավախախտման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 02.04.2021 թվականին կայացվել է թիվ 007540/06 որոշումը՝ Աննա Նիկիտայի Աբրահամյանի նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին: «Ներքին Չարբախ» բարեգործական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Աբրահամյանը նախազգուշացման նշանակման մասին որոշմանը իրազեկվելու օրվանից հետո 30 օրվա ընթացքում նշված հոդվածով նախատեսված խախտումը (խախտումները) չի վերացրել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.18 հոդվածի 2-րդ մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.18 հոդվածի 2-ին մասի՝ Աննա Նիկիտայի Աբրահամյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տույժը 50.000 (հիսուն հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.18 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքի նշանակման մասին որոշմանը իրազեկվելու օրվանից հետո՝ Երեսուն օրվա ընթացքում, հիմնադրամի կողմից սույն հոդվածով նախատեսված խախտումը (խախտումները) չվերացնելու պատճառով է տուգանքի նշանակում հիմնադրամների պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ընդունելու օրվանից հետո՝ Երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին.

900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեն